ՎԵՆԵՐԱ ՄԱԿԱՐՅԱՆ
ՄՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԼԼԵԹԻ[1] ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԺԵ.-ԺԹ. դդ.)

Միլլեթի կազմավորման պատմությունը. ԺԶ. դարասկզբին Օսմանյան կայսրությունը հիմնականում ավարտեց իր արտաքին նվաճումները եւ ձեռնամուխ եղավ նվաճված երկրների կառավարման համակարգի մշակմանը:

Օսմանյան վարչական համակարգը բաղկացած էր երկու հիմնական բաժանումներից՝ տարածքային (պրովինցիաներ) եւ դավանական: Պետությունը ժողովրդին դասակարգում էր ոչ թե ըստ էթնո-լեզվական, այլ՝ կրոնական պատկանելության: Օսմանյան կայսրության ոչ մուսուլման բնակչությունը, որը, համաձայն «Թահրիր դեֆթերիի» (Աշխարհագիր մատյաններ) փաստաթղթերի, մոտ ԺԶ. դարի կեսերին կազմում էր բնակչության 40 %-ը[2], բաժանված էր դավանական երեք համայնքների՝ միլլեթների՝ հույն-ուղղափառ, հայ-առաքելական եւ հրեա[3]:

---

[1] «Միլլեթ» արաբերեն բառ է եւ նշանակում է ազգ, ազգություն. Օսմանյան կայսրությունում այն ուներ այլ իմաստ՝ մատնանշում էր մարդու դավանական եւ ազգային պատկանելությունը, մասնավորապես՝ ոչ-մուսուլման լինելը. տես **İ. Ortayli**, Osmanli Imparatorluğu'nda Millet Sistemi Türkler, Cilt 10, Ankara, 2002 [s. 216-220], pdf. p. 393-399, էջ 394, http://www.meliksah.edu.tr/msen/wp-content/uploads/2014/06/turkler-cilt-10.splitted-and-merged.pdf. նաեւ՝ **Լ. Սահակյան**, Բարձր Հայքի Բարերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը 16-րդ դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երեւան, 2007, էջ 52:

[2] **F. Öztürk**, The Ottoman millet system, p. 79, footnote 44, www.journals.istanbul.edu.tr/iugaad/article/download/5000063916/5000059858. Օսմանյան կայսրությունը 5 անգամ է մարդահամար անցկարցրել՝ 1831, 1881/82, 1893, 1906/7 եւ 1914 թվականներին: Համաձայն այդ տվյալների՝ կայսրության ոչ մուսուլման բնակչությունը 1831 թ. կազմել է 29.67 %, 1881/82 թ.՝ 26.61 %, 1906/7 թ.՝ 25. 74 %, 1914 թ.՝ 18.88 %. այս մասին տես **A. Guler**, Osmanli Devletinde Azinliklar [Minorities in the Ottoman State], Istanbul, 1997, էջ 128:

[3] Հետագայում հաշվի առնելով կայսրությունում ստեղծված դավանական անջատումները՝ 1830 թ. օսմանյան իշխանությունները ճանաչեցին կաթոլիկ, իսկ 1847 թ. բողոքական

Միլլեթները ներհամայնքային կյանքում վայելում էին օրինական ինքնավարություն եւ ենթարկվում էին միլլեթ բաշուն (համայնքապետ), այսինքն՝ յուրաքանչյուրն իր կրոնական համայնքի պատրիարքին կամ ռաբբին[4]: Հոգեւոր համայնքը քաղաքական կառուցվածք ուներ եւ ոչ-մուսուլման համայնքների համար «ինքնության աղբյուր» էր[5]:

Միլլեթի համակարգը հիմնված էր «զիմմի» ավանդության[6] վրա, որը սահմանում էր հասարակական եւ անհատական կանոններ այն կրոնական փոքրամասնությունների համար, որոնք համարվում էին Իսլամական պետության հպատակներ: Հիմնվելով այդ ավանդության վրա՝ Օսմանյան կայսրությունը հաշվի էր առնում ոչ մուսուլմանների համայնքային ինքնությունը, հետեւում էր նրանց սոցիալ-կրոնական կարգերին, սակայն չէր ճանաչում որեւէ համայնքի ամբողջական ինքնավարությունը[7]:

«Միլլեթ» եզրույթի ներկայիս սահմանումը՝ որպես տարբեր էթնիկ ենթախմբերից բաղկացած կրոնական բնույթի կազմակերպություն, ներկայացվում է հայտնի հեղինակ Իլբեր Օռտայլիի հետեւյալ սահմանման մեջ. «Միլլեթը կազմակերպության ձեւ է եւ օրինական կարգավիճակ, որն առաջացել է մոնոթեիկ կրոնի հետեւորդների (ehl-i zimmet) կայսրությանը հպատակվելուց հետո՝ համաձայն պաշտպանություն չնորհող պայմանագրի (ahidname)»[8]: Փաստորեն՝ մուսուլմանները հանդուրժում էին քրիստոնեական եւ հրեական համայնքները, քանի որ վերջիններիս դավանանքները համարվում էին «իսլամի ամենավաղ՝ ոչ ամբողջական եւ

միլլեթները: Այս երկու անջատված մասերը՝ կաթոլիկ եւ բողոքական հասարակությունները, թեպետ կրոնադավանական սկզբունքով էին կազմված, այնուամենայնիվ, երկուսի կազմում էլ գերիշխում էին հայերը: 1848 թ. կազմավորվեց նաեւ Մելքիթ միլլեթը (հույն կաթոլիկները). տես **Մ. արք. Օրմանեան**, Հայոց Եկեղեցին, Կ. Պոլիս, 1912, էջ 92. **Է. Սեմերճեան**, Հայկական կեանքը արդի Հալէպի վաղ օսմանեան ժամանակաշրջանին, Ուսումնասիրական փորձ մը՝ հայ ընկերային կեանքի պատմութեան կառուցման համար՝ իսլամական աղբիւրներու օգտագործման առնչութեամբ, «Տաթեւ» հայագիտական տարեգիրք, թ. 1, Հալէպ, 2008, էջ 268:

[4] **I. Colin**, The Ottoman Empire, 1300-1650, the structure of power, Printed and bound in Great Britain by Mackays of Chatham, 2002, էջ 216. **Է. Սեմերճեան,** նշվ. աշխ. էջ 260:

[5] **F. Öztürk**, նշվ. աշխ., էջ 73:

[6] Տես **Cl. Cahen**, Dhimma, Encyclopedie de l'Islam, par B. Lewis, Ch. Pellat et J. Shacht, t. II, Leyde E. J. Brill, Paris G. P. Maisonneuve, Larose S. A., էջ 234-238. **K. Hashemi**, The right of minorities to identity and the challenge of non-discrimination: a study on the effects of traditional muslims Dhimmah on current state practices, 13 Int. J. Min., Gr. R., 2006:

[7] **F. Öztürk**, նշվ. աշխ., էջ 73:

[8] Տես **S. Barbieri**, Ottoman Millet system and national-cultural autonomy. A distance dialogue, European Consortium for Political Research 41st Joint Sessions, University of Mainz, 11-16 March 2013, էջ 3-4, https://ecpr.eu/Filestore/PaperProposal/3f7eeb14-eee4-4fa7-b849-7faed99f35f5.pdf . **İ. Ortayli**, նշվ. աշխ., pdf. էջ 395:

փոխարինված ձեւը»[9]: Բազմաստվածային պաշտամունքի հետեւորդներն ու կռապաշտները, հակառակը, ընդունվում էին որպես ստորադրյալ եւ դատապարտված էին մուսուլմաններին ճուլվելու կամ ստրկության: Այլ կերպ ասած՝ նրանք իրավունք չունեին կապ հաստատել կայսրության հետ՝ դառնալով «զիմմիի ժողովուրդ» (ahl al-dhimma, dhimmi), «դաշինքի ժողովուրդ» (dhimma): Զիմմիներն իրավունք ունեին հետեւելու իրենց կրոնին՝ պայմանով, որ ճանաչեն իսլամի գերակայությունը եւ մուսուլման բնակչության նկատմամբ իրենց ստորադասությունը: Ոչ մուսուլման համայնքների եւ մուսուլմանական պետության միջեւ հարաբերությունները կարգավորվում էին օրենքով[10]:

Արեւմտյան պատմաբանները, հիմնականում հղելով Բ. Բրուդին, կասկած են հայտնում միլլեթ համակարգի եւ նրա շրջանակներում հոգեւոր ղեկավարների ունեցած իրավասությունների վերաբերյալ[11]: Նրանք կարծում են նաեւ, որ «միլլեթ» եզրույթը կրոնական համայնքները բնութագրելու համար օգտագործվել է միայն սկսած ԺԹ. դարասկզբից, իսկ մինչ այդ բնորոշել է կայսրության մուսուլմաններին եւ կայսրությունից դուրս ապրող քրիստոնյաներին[12]:

Բ. Բրուդն ընդգծում է, որ ԺԵ.-ԺԶ. դդ. եւ ԺԹ. դարում «միլլեթ» եզրույթի արտահայտած իմաստները տարբեր էին, եւ դրանց տարբերությունը բացատրվում է լեզվական եւ քաղաքական հանգամանքներով: Նա այն համոզման է, որ ԺԵ. եւ ԺԶ. դդ. ընթացքում եվրոպական դիվանագիտական բառարաններում «միլլեթ» եզրը կիրառվել է օսմանյան շրջանակներում՝ ընորոշելով Օսմանյան կայսրության կրոնական ինքնավար համայնքները՝ որպես հոմանիշ "cemaatlar" եւ "dhimmi" եզրույթների (օսմանյան ավանդույթով երկուսն էլ գործածվել են ընորոշելու համար ոչ մուսուլման համայնքները)[13]: Սակայն օսմանյան պաշտոնական բնագ-

---

[9] **B. Braude, B. Lewis,** Christians and Jews in the Ottoman Empire. The functioning of a plural society, London, 1982, p. 5.

[10] **S. Barbieri,** նշվ. աշխ., էջ 3-4:

[11] "The Cambridge History of Turkey", vol. 3, The later Ottoman Empire, 1603-1839, ed. by Suraiya Faroqhi, Cambridge, 2006, p. 275-276.

[12] **D. Quataert,** The Ottoman Empire, 1700-1922, second edition, Cambridge, p. 175-176.

[13] Անդ, էջ 5: Բ. Բրուդը կարծում է, որ մինչ այդ (ԺԹ. դար՝ բարեփոխումների շրջան), միլլեթի՝ որպես «կրոնով սահմանված մարդիկ» բնորոշումը տրվել է ոչ միայն ոչ մուսուլմաններին, այլեւ առհասարակ բոլոր ազգերին: Դեռ ավելին՝ «միլլեթ» եզրույթն օգտագործվել է բնութագրելու համար մուսուլման համայնքները՝ ի հակադրություն զիմմիների: Փաստորեն՝ այն օգտագործվել է որպես «ումմայի», «իսլամի ժողովուրդ»-ի հոմանիշ. տես **B. Braude,** Foundation myths of the Millet system, in: **B. Braude, B. Lewis,** էջ 70. **S. Barbieri,** նշվ. աշխ., էջ 4:

բերում եւ վարչական գրագրության մեջ այն հազվադեպ է օգտագործվել, այն էլ ընդհանուր առմամբ՝ ոչ մուսուլման մշակույթի եւ նշանավոր անձանց նկատմամբ հարգանք արտահայտելու համար[14]:

Կ. Պոլսի հայոց պատրիարքների իրավասությունները. *Միլլեթներն անցել են ճանաչման աստիճանական ճանապարհ: Հրեա միլլեթը բնորոշվում է ապակենտրոնացված վարչական համակարգով եւ միայն ԺԹ. դարի կեսերին է (1835 թ.) պաշտոնապես ճանաչվել Օսմանյան պետության կողմից՝ համամբաշու՝ գլխավոր ռաբբիի աստիճանով*[15]: *Այս մասին փաստում է նաեւ Մաղաքիա արք. Օրմանյանը՝ նշելով, որ «Հրեաները այն ատեն օրինաւորապէս եւ պաշտօնապէս ճանչցուած մարմին մը չէին կազմէր»*[16]: *Սակայն Հ. Սիրունին առարկում է՝ նկատելով, որ «տրամաբանօրէն անընդունելի է նախ որ ուրոյն կրօնքով եւ ուշագրաւ թիւով տարր մը, որպիսին էր հրեան, պաշտօնական կապ չունենար պետական շրջանակներուն հետ»*[17]: *Այնուամենայնիվ, հրեա միլլեթի ուսումնասիրությունը դուրս է սույն հոդվածի շրջանակից*[18]:

Հույն-ուղղափառ միլլեթը ամենահինն էր եւ ճանաչվել էր 1454 թ.: Հույն միլլեթի կազմի մեջ էին մտնում կայսրության երկաքնակ բոլոր համայնքները կամ քաղկեդոնականները: Վերջիններս գտնվում էին հույն պատրիարքի իրավասության ներքո՝ միաժամանակ ունենալով իրենց ազգային-հոգեւոր առաջնորդը: Նույն սկզբունքով՝ կայսրության միաբնակ բոլոր համայնքները՝ ասորի հակոբիկյան, զպտի եւ եթովպական, դրվեցին Կ. Պոլսի հայոց պատրիարքի իրավասության տակ[19]:

Հայկական միլլեթի կազմավորման սկիզբը համարվում է 1461 թ., այսինքն՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքության ստեղծման թվականը, երբ Սուլթան Մեհմեդ Բ.-ն (1444-1446, 1451-1481 թթ.), Կ. Պոլիս հրավիրելով Բուրսայի Հովակիմ եպիսկոպոսին, նրան շնորհել է պատրիարքի տիտղոս

---

[14] **S. Barbieri**, նշվ. աշխ., էջ 5:

[15] Այս մասին մանրամասն տես **D. Stamatopoulos**, From Millets to minorities in the 19th century Ottoman Empire: an ambiguous modernization, Pisa, 2006, p. 43, http://www.cliohres.net/books/7/21. pdf էջ 254-258. **S. Sürgevil**, Osmanli İmparatorluğu'nda Yahudiler, Türkler, Cilt 10, Ankara, 2002 [s. 251-260], pdf. p. 461-470, էջ 462, http://www.meliksah.edu.tr/msen/wp-content/uploads/2014/06/turkler-cilt-10.splitted-and-merged.pdf.

[16] **Մ. արք. Օրմանեան**, Հայոց Եկեղեցին, էջ 81. տես **Յ. Սիրունի**, Պոլիս եւ իր դերը, հ. 1, Պէյրութ, 1965, էջ 290:

[17] **Յ. Սիրունի**, նշվ. աշխ., հ. 1, էջ 290:

[18] Անդ, էջ 290-291:

[19] **A. Sanjian**, The Armenian communities in Syria under Ottoman dominion, Cambridge, Masshachusetts, 1965, էջ 32-33. տես **İ. Ortayli**, նշվ. աշխ., էջ 396:

եւ կայսրության հայերի վրա հոգեւոր ու քաղաքական իշխանություն[20]: Պատրիարքի աթոռանիստը Սամաթիայի Ս. Գեւորգ եկեղեցին էր, իսկ 1641 թ. մինչ օրս՝ Գումգափուի Ս. Աստվածածին եկեղեցին[21]:

Մինչ այսօր միանշանակ չեն ներկայացված Հովակիմ եպիսկոպոսի պատրիարք դառնալու հանգամանքները: Առաջին եւ միակ աղբյուրը Մ. Չամչյանի աշխատությունն է, որ հայտնում է Հովակիմի՝ Բուրսայի առաջնորդ լինելու եւ Մեհմեդ Բ. սուլթանի՝ նրան Կ. Պոլսի հայերի հոգեւոր առաջնորդ կարգելու մասին[22]: Մ. Չամչյանից բացի՝ հայերեն կամ օտարալեզու որեւէ աղբյուր չի հիշատակում այդ մասին, ինչը, բնականաբար, կասկածի տեղիք է տալիս: Խնդիրն այն է, որ տվյալ ժամանակահատվածում հայերեն ձեռագրերի հիշատակարանները միաժամանակ Հովակիմ անունով մի քանի եպիսկոպոսների են վկայակոչում (1483 թ.՝ Բերիայում (Հալեպ) կամ Բերայում, 1439 թ.՝ Կ. Պոլսում, 1445 թ.՝ Կուտինա-Պրուսայի (Քյոթահյա-Բուրսա) շրջանում, 1469 թ.՝ Ֆիլիպեում), ուստի դժվար է միանշանակ ասել, թե նրանցից որն է հետագայում դարձել Կ. Պոլսի առաջին պատրիարքը[23]:

Անկախ Հովակիմի՝ առաջին պատրիարք դառնալու, նրա անձի վերաբերյալ տարակարծություններից՝ անհերքելի փաստ է դեռեւս բյուզանդական գերիշխանության ժամանակներից Կ. Պոլսում հայերի մշտական ներկայությունը: Թուրքական ներխուժումից դարեր առաջ, ինչպես վկայում են ժամանակի գրավոր հուշարձաններն ու հիշատակարանները, անկախ իրենց թվաքանակից՝ Կ. Պոլսի հայերը հանդես են եկել որպես «էթնոկրոնական որոշակի միավոր»՝ իրենց առաջնորդ եպիսկոպոսի գլխավորությամբ[24]:

---

[20] **A. Gündüz**, İstanbul'un Osmanlilar Tarafindan Fethi, Türk- İslam ve Avrupa Açisindan Önemi, Karadeniz Araştirmalari, Cilt: 5, Sayi: 17, Bahar 2008 (s. 51-66), էջ 61. նաեւ՝ **A. Sanjian**, նշվ. աշխ., էջ 32. **Հ. Սիրունի**, Պոլիս եւ իր դերը, «Էջմիածին», 1963, Դ., էջ 29: Դժբախտաբար, այդ աթոռի հիմնման հանգամանքները լրիվ ծանոթ չեն մեզ, քանզի, ինչպես նշում է Մաղաքիա արք. Օրմանյանը, «Կոստանդնուպոլսոյ հայաբնակութիւնը կամ լաւ եւս օսմանեան հպատակ հայութիւնը, իւր յատուկ պատմագիրը չէ ունեցած, որ որոշակի ցուցնէր մեզի՝ անոր առաջին ժամանակներուն հանգամանքները, եւ ստիպուած ենք կցկտուր ակնարկներով կազմել անոր նախնական պատմութիւնը, մինչեւ որ հասնինք այն ժամանակներուն, ուր գլխաւոր դիրք եւ կաեւորութիւն ստացաւ ընդհանուր հայութեան հանդէպ». «Ազգապատում», մասն Բ., Բէյրութ, 1960, էջ 2186. տես **Յ. Սիրունի**, նշվ. աշխ., հ. 1, էջ 219-224:

[21] **Հ. Սիրունի**, Պոլիս եւ իր դերը, «Էջմիածին», 1963, Դ., էջ 33-34, 39:

[22] Անդ, էջ 29. **Մ. Չամչյան**, Պատմութիւն Հայոց, հ. Գ., Վենետիկ, 1786, էջ 500:

[23] **Հ. Սիրունի**, Պոլիս եւ իր դերը, «Էջմիածին», էջ 29-31:

[24] **Ա. Խաչատյան**, Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը, Երեւան, 2007, էջ 49-50. տես **Վ. Բայբուրդյան**, Օսմանյան կայսրության պատմություն, Երեւան, 2011, էջ 152:

Եվ այսպես՝ միլլեթների գլուխ կանգնած պատրիարքները, որպես իրենց կրոնաէթնիկական խմբի հոգեւոր առաջնորդ, դառնում էին իրենց ժողովրդի իրավական ներկայացուցիչը Օսմանյան պետության առջեւ: Այսինքն՝ նրանք «հոգեւոր գերակայության ձեւի մեջ իրականացնում էին աշխարհիկ քաղաքացիական գործառույթներ, որոնք պետք է համապատասխանեին օսմանյան կարգուկանոնին եւ ապահովեին հողային-ռենտային հարաբերությունների մանրակերտը տվյալ համայնքում»[25]:

Կ. Պոլսի հայոց պատրիարքների իրավասությունների ուսումնասիրությունը մեծ կարեւորություն ունի նախ եւ առաջ այն առումով, որ դրանց հիման վրա կարողանում ենք որոշակի պատկերացում կազմել տվյալ ժամանակահատվածում կայսրության հպատակ հայերի նկատմամբ օսմանյան իշխանությունների վարած քաղաքականության եւ դիրքորոշման մասին:

Հայոց պատրիարքների իրավասությունները եւ առհասարակ միլլեթների իրավական վիճակը լավագույնս արտացոլված են օսմանյան սուլթանների կողմից հայոց կաթողիկոսներին ու պատրիարքներին տրված ֆերմաններում (հրաման), կաթողիկոսական բերաթներում (արտոնագրեր): Այդ մասին Սիմեոն Երեւանցին գրում է. «Քանզի թեեւ տվողներն այլազգիներ են եւ մեր կրոնին՝ թշնամի, սակայն նրանց արարքներն ու հրամանագրերը մեր այս երկրի համար օգուտ տվող են, [ցավերը] բուժող եւ ապահովութիւն [բերող]: Ինչպես որ թունավոր օձերից ենք ակնկալում ստանալ թերիակ[26], որպեսզի բուժենք զանազան հիվանդություններ»[27]:

Ցավոք, մինչ այժմ պահպանված ֆերմաններից ամենահինը, որ մանրամասն տեղեկություններ է հաղորդում հայոց պատրիարքների պարտականությունների ու իրավասությունների մասին, ԺԸ. դարի է՝ Հիջրայի 1177 թ./ 1764 թ. հունիսի 3: Այն օսմանյան սուլթան Մուստաֆա Գ.-ի բերաթն է՝ տրված Կ. Պոլսի պատրիարք Գրիգոր Պասմաճյանին (1764-1773 թթ.): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆերմանները հիմնականում կրկնում էին (նորոգում էին նախորդ հրամանների պայմանները եւ հաճախ հիշատակվում նման ֆերմաններ տված նախորդ սուլթանների կողմից) նախորդ բերաթների հիմնական կետերը, մեզ հասած առաջին օրինակը եւ հետագա ֆերմանները (այդ թվում նաեւ ՄՄ «Կաթողիկոսական

[25] **Ա. Խառատյան**, նշվ. աշխ., էջ 156:
[26] Դեղ:
[27] **Սիմեոն Երեւանցի**, Ճամբո, Երեւան, 2003, էջ 329:

դիվան»-ում պահվող) համեմատելով՝ կարելի է վեր հանել Կ. Պոլսի հայոց պատրիարքների իրավասությունները: Ֆերմանի հիմնական կետերն են.

1. Պատրիարքը, պաշտոնին անցնելով, պետք է 100.000 ակչե վճարեր արքունական գանձարան՝ իբրեւ փեշքեշ[28]*:*

Հայտնի է, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքներն այդ պաշտոնին հաստատվելու կամ ցանկացած որոշում եւ առաջարկ հաստատող ֆերման ձեռք բերելու համար պարտավոր էին տարեկան սահմանված տուրք վճարել արքունական գանձարան: Այդ մասին մանրամասն տեղեկություն հայտնում է ԺԸ. դարի ժամանակագիր Ղ. Ինճիճյանը: Հայոց պատրիարքը պետք է վճարեր սահմանված տարեկան 100.000 ակչե՝ «ի գանձն արքունի» (hazîne-i hâssa) եւ 140.000 ակչե, որ տալիս էր դեֆթերդարին: Ներառյալ «բահշիշը», որ տալիս էր այլ պաշտոնյաներին, կազմում է 1.244 ղուրուշ գումար: Պատրիարքը նաեւ պետք է վճարեր նորանշանակ վեզիրին 500 ղուրուշ, «վէզիր քեահեասիին» (տնտեսական գործերով վերակացու՝ sadaret kethüdasi)՝ 250 ղուրուշ, 200 ղուրուշ՝ չավուշ բաշիին (çavuşbaşi)[29]*, կերպասե հանդերձներ՝ որպես ընծա, 40 ղուրուշ՝ այլ ծախսեր (muhtelif eşhâs)*[30]*: Իսկ պատրիարքն իրեն ենթակա յուրաքանչյուր առաջնորդությունից տարեկան առնում էր 600 ղուրուշ, 200՝ Անկարայից, Թոքատից, Դիարբեքիրից, Ուրֆայից, Սիվասից, Տրապիզոնից եւ Գյուլյումշանեից, անատոլիական մասից՝ բացի Իզմիրից եւ Արաբկիրից, նաեւ նրանցից, որոնք Էջմիածնի թեմերն են, Ռումելիի*[31] *մասից՝ բացի Ադրիանեից (Edirne), Թեքիրդաղից*[32]*:*

2. Կ. Պոլսի պատրիարքի իրավասությունը տարածվում էր կայսրության Ռումելիի եւ Անատոլիայի շրջաններում բնակվող համայն հայության վրա: Այդ շրջանների թեմական առաջնորդները, քահանաներն իրենց հոգեւոր ծառայության համար նրան պետք է դիմեին: Ոչ ոք չպետք

---

[28] Փեշքեշ=փիշքեշ՝ ընծա, պատարագ, պարգեւ. տես **Ի. Յակովբոս**, **Վ. Պօզաճեան**, Համառօտ բառարան ի տաճիկական ի հայ, հ. Բ., Վիեննա, 1841, էջ 955:

[29] Չավուշ բաշի՝ չավուշների պետ, համարժեք է փաշային. տես **Ա. Սաֆրաստյան**, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի եւ Ադրբկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա., Երեւան, 1964, էջ 374:

[30] **Ղ. Ինճիճեան**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ե., ի Վենէտիկ, 1804, էջ 117. տես "The Patriarch and the Sultan: the struggle for authority and the quest for order in the eighteenth-century Ottoman Empire", A Ph. D. Dissertation by E. Tellan, Department of History İhsan Doğramaci Bilkent University Ankara, June 2011, էջ 167-168:

[31] Օսմանյան կայսրության եվրոպական մասը՝ ներկայիս Բալկանները կամ Բալկանյան թերակղզին: Կայսրության ողջ տարածքը բաժանված էր երկու հիմնական մասերի՝ եվրոպական՝ Ռումելի եւ ասիական՝ Անադոլու (Անատոլիա):

[32] **Ղ. Ինճիճեան**, նշվ. աշխ., էջ 117. տես **E. Tellan**, նշվ. աշխ., էջ 167-168:

է արգելք հանդիսանար պատրիարքության ենթակա շրջաններում առաջնորդ ընտրելիս, վարդապետ եւ քահանա ձեռնադրելիս կամ պաշտոնանկ անելիս: Առանց պատրիարքի կնքած գրության՝ որեւէ մեկը առաջնորդական պաշտոն չէր կարող ստանձնել:

Վերը նշված թեմերի առաջնորդները տվյալ ժամանակաշրջանում համարվում էին պատրիարքի փոխանորդները՝ մուրախխասները (պատվիրակ կամ փոխանորդ)[33]: Վերջիններս հանդես էին գալիս որպես տեղական միլլեթբաշիներ, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատու էր իր հատվածի ժողովրդի հարկային-ֆինանսական եւ իրավական (կտակ, պսակ, ամուսնություն, գույքային հարաբերություններ) պարտականությունների եւ իրավունքների իրացման համար[34]:

3. Վակֆերի[35] վերաբերյալ խնդիրները պատրիարքի իրավասությանն էին պատկանում:

4. Անժառանգ կղերի թողած գույքը պետք է անարգել տնօրիներ պատրիարքը՝ առանց արքունական դանձարանի ու շարիա դատարանի պաշտոնյաների միջամտության:

5. Չէին արգելվում հայերի ծիսակատարությունները հնուց ի վեր նրանց պատկանող եկեղեցիներում, վանքերում եւ ուխտատեղիներում, ինչպես նաեւ արգելքներ չէին դրվում վերջիններիս նորոգության ժամանակ:

Օսմանյան սուլթանների կողմից Կ. Պոլսի հայոց պատրիարքներին տրված տարաբնույթ ֆերմանների կարեւորագույն կետերից են կայսրության քանդված եւ վերանորոգման կարիք ունեցող հայկական բոլոր եկեղեցիների ու վանքերի վերանորոգումը թույլատրելու, այդ ընթացքում որեւէ խոչընդոտ չհարուցելու վերաբերյալ որոշումները[36]: Մատենադարանի արխիվային ֆոնդի կաթողիկոսական դիվանում այդ մասին փաստող բազմաթիվ հրովարտակներ են պահվում: Դրանցում հիմնականում տվյալ սուլթանը նորոգում է (ամենայն մանրամասնությամբ նշում է իրեն

---

[33] **Մ. արք. Օրամանեան**, Ազգապատում, մասն Բ., էջ 2187-2188. **Յ. Սիրունի**, նշվ. աշխ., հ. 1, էջ 282:

[34] **Ա. Խառատյան**, նշվ. աշխ., էջ 156:

[35] Անօտարելի սեփականություն. ըստ իսլամական իրավագիտության՝ նվիրատվության պահին դադարում է լինել նվիրատուի սեփականությունը, բայց նաեւ չի դառնում ստացողի սեփականությունը, քանի որ առքուվաճառք չի արվել:

[36] Այստեղ հարկ է նշել, որ իսլամական օրենքի համաձայն՝ ոչ-մուսուլմանները չէին կարող կառուցել նոր եկեղեցիներ կամ սինագոգեր, այլ միայն վերանորոգել հները: Եկեղեցիների կառուցումը հնարավոր էր միայն պետական հատուկ քաղաքականության շրջանակներում. այս մասին տես **F. Öztürk**, նշվ. աշխ., էջ 78. **Հ. Սիրունի**, Պոլիս եւ իր դերը, «Էջմիածին», էջ 33:

նախորդած սուլթանների անունները, որոնք նման ֆերմաններ են արձակել) Կ. Պոլսի հայոց պատրիարքներին տրված ֆերմանը, որով հրաման էր տրվում նայիբներին չխոչընդոտել եկեղեցիների վերանորոգումը կամ ավերված եկեղեցիների տեղերում նորերի կառուցումը[37]*:*

6. Որեւէ քահանա չպետք է պսակ կատարեր առանց պատրիարքի հավանության եւ եկեղեցական ծեսի պահանջներին հակառակ: Երբ հայ կինն իր ամուսնուց փախչեր կամ ամուսինը ցանկանար նրանից բաժանվել, պատրիարքից բացի ոչ ոք չպետք է միջամտեր:

Պետք է նշել, սակայն, որ հիմնականում ընտանեկան հարաբերությունների պարզաբանման համար ոչ մուսուլմաններն իրավունք ունեին ընտրելու կա՛մ միլլեթ դատարանը, կա՛մ շարիա դատարանը: Վերջին դեպքում մուսուլման դատավորի վճիռները հիմնվում էին իսլամական իրավունքի վրա: Բնականաբար, ոչ մուսուլման կրոնական առաջնորդները փորձում էին արգելք հանդիսանալ այն մարդկանց համար, որոնք դիմում էին շարիա դատարանին, եւ նրանց նկատմամբ կիրառում էին պատժամիջոցներ. այնուամենայնիվ, ոչ մուսուլմանները հաճախ էին դիմում շարիա դատարանին[38]*: Եթե կողմերից մեկը մուսուլման էր, կամ ոչ մուսուլմանը գործել էր քրեական հանցանք, ապա գործը պարտադիր պետք է քննվեր շարիա դատարանում*[39]*: Հետաքրքիր է, որ շարիա դատարանին հիմնականում դիմում էին ոչ մուսուլման կանայք՝ ամուսնալուծությունների դեպքում, երբ սեփական համայնքի դատարանը չէր կարող ամուսնալուծել կամ դրանից հետո ֆինանսական փոխհատուցում չէր տալիս, ինչը, սակայն, պարտադիր էր իսլամական օրենքով:*

Այս երեւույթն այնքան տարածված էր, որ Հալեպ քաղաքի շարիա դատարանների (թվով 5) արձանագրությունների ուսումնասիրությունից հետո որոշ պատմաբաններ կասկածի տակ են դնում օսմանյան մի շարք շրջաններում միլլեթ դատարանների գոյության փաստն առհասարակ[40]*:*

---

[37] ՄՄ «Կաթողիկոսական դիվան», թղթ. 3, վավ. 59, օսմաներեն. այս վավերագիրը սուլթան Մեհմեդի հրովարտակն է (1809 թ. /1224/) կայսրության բոլոր զավառների, նահանգների իշխանություններին: Ի պատասխան Կ. Պոլսի Հովհաննես պատրիարքի խնդրանքին՝ սուլթանը հրամայում է թույլատրել եւ խոչընդոտներ չհարուցել քանդված եւ վերանորոգման կարիք ունեցող եկեղեցիների ու վանքերի վերանորոգման ժամանակ: Նույն բովանդակությամբ ֆերմանի օրինակ տես **Գ. քհնյ. Աղանեանց**, Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ., Մանր մատենագիրք, ԺԵ.-ԺԹ. դար, Թիֆլիս, 1912, էջ 247-256:

[38] **F. Öztürk**, նշվ. աշխ., էջ 80:

[39] Անդ, էջ 80-81:

[40] **A. Cohen**, On the realities of the Millet system: Jerusalem in the sixteenth century, էջ 15. **Է. Սեմերճեան**, նշվ. աշխ., էջ 258:

7. Շարիայի (դատարան) հետ առնչություն ունեցող հայերի դատերը պետք է ուղղարկվեին Կայսերական դիվան (Dîvân-i Hümâyun):

Պետական իշխանությունը կարող էր չեղյալ համարել համայնքային, ինչպես նաեւ շարիա դատարանների վճիռները:

8. Պատրիարքը պետք է տեր լիներ եկեղեցիներին պատկանող այգիներին, պարտեզներին, ագարակներին, խանութներին, ջրաղացներին, շենքերին, կարասիներին եւ այլն:

9. Ճամփորդության ժամանակ իշխանության ներկայացուցիչներից ոչ ոք պահանջներ չպետք է ներկայացներ պատրիարքի եւ նրան ուղեկցողների հանդերձանքի, ձիերի եւ այլնի վերաբերյալ:

10. Չպետք է խոչընդոտեին պատրիարքին պատկանող այգիների բերքի կամ հավատացյալների կողմից իբրեւ նպաստ մատուցված սննդի տեղափոխմանը:

11. Որեւէ քրիստոնյա (հայ) իր կամքին հակառակ չպետք է դավանափոխվեր:

12. Պատրիարքն ու նրա հետեւորդներից 15 եկեղեցականներ ազատվում էին ջիզյայից (գլխահարկ), ավարիզից[41] եւ թեքիալիֆ-ի էորֆիեից[42]:

13. Որեւէ իշխանավոր իրավունք չուներ վերցնելու ճշմարիտ (ուղղափառ) հայ ռայաներին պատկանող եկեղեցիներն ու վանքերը, դրանք տալ ուրիշ դավանանքի պատկանող կամ «կաթոլիկ կոչված խռովարարներին»:

14. Եկեղեցիների գույքից մաքսատուրք եւ անցատուրք չպետք է գանձվեր[43]:

Ահա սրանք էին այն հիմնական կետերը, որոնք, ժամանակի պահանջներին համապատասխան, որոշակի փոփոխություններ են կրել, սակայն հիմնականում պահպանվել են օսմանյան սուլթանների կողմից Կ. Պոլսի հայոց պատրիարքներին տրված գրեթե բոլոր ֆերմաններում:

---

[41] Օսմանյան կայսրության հարկատեսակ (օսմաներեն՝ արկած, դժբախտություն), որը սկզբում հավաքվում էր պատերազմների ժամանակ՝ սննդամթերքի տեսքով կամ փոխհատուցվում էր աշխատանքով: Հետագայում այն սկսեց մշտական բնույթ կրել եւ գանձվել դրամով. տես **Լ. Վարդան**, Հարկերը Օսմանեան եւ Պարսկական կայսրութիւններուն մէջ, ԺԵ.-Ի. դար, Երեւան, 2004, էջ 79-87:

[42] Ընդհանուր անվանումն է (թեքիալիֆ՝ բեռ, ծանրություն, էորֆիե՝ սովորության համաձայն) բազմաթիվ հարկերի (99 կամ ավել), որոնք գանձվում էին ըստ ժամանակի կամ պայմանների պահանջի կամ տվյալ միապետի կամայականությամբ. այս մասին մանրամասն տես **Լ. Վարդան**, նշվ. աշխ., էջ 404-410:

[43] **Յ. Սիրունի**, նշվ. աշխ., հ. 1, էջ 282-284. այս ֆերմանի, ինչպես նաեւ Կ. Պոլսի հայոց պատրիարքների իրավասությունների մասին տես **Ա. Խառատյան**, նշվ. աշխ., էջ 134-140:

Կ. Պոլսի հայոց պատրիարքի իրավասությունները տարածվում էին նաեւ Սսի եւ Աղթամարի կաթողիկոսությունների, Երուսաղեմի պատրիարքության վրա[44]*:*

Հայտնի է, որ Հալեպի, Անտիոքի, Բեյլանի եւ Հյուսիսային Սիրիայի հայկական թեմերը գտնվում էին Սսի կաթողիկոսի, իսկ Լաթաքիայի, Դամասկոսի եւ Բեյրութի համայնքերը՝ Երուսաղեմի պատրիարքի իրավասության ներքո[45]*: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, դա են վկայում նաեւ օսմանյան սուլթանների՝ հայոց պատրիարքներին տված ֆերմանները. վերջիններիս իրավասությունները տվյալ ժամանակաշրջանում տարածվում էին կայսրության համայն հայության վրա: Հետեւաբար՝ Սսի, Աղթամարի կաթողիկոսություններն ու Երուսաղեմի պատրիարքությունը, պահպանելով մինչ այդ հաստատված ներեկեղեցական բաժանումները, այնուամենայնիվ, մտնում էին Կ. Պոլսի հայոց պատրիարքների ենթակայության ներքո: Այդ մասին է փաստում ՄՄ արխիվային փաստաթղթերի՝ «Կաթողիկոսական դիվան»-ի թ. 258-րդ թղթապանակի Հմր. 31-րդ վավերագիրը: Այն Կիլիկիայի կաթողիկոս Եփրեմ Սսեցու՝ 1782 թ. թվագրված գրությունն է՝ ուղղված Զաքարիա (Զաքարիա Փոքուզյան Կաղզվանցի՝ 1773-1781, 1782-1799 թթ.) պատրիարքին. Եփրեմ Սսեցին աղերսագին խնդրում է սրբազանին՝ սուլթանից ֆերման ձեռք բերել՝ Բերիայի հայոց թեմին առաջնորդ նշանակելու համար: Կաթողիկոսը նշում է, որ այս հարցը կարող է լուծել նաեւ եկեղեցական ժողովը, սակայն այն դեպքում, երբ առաջնորդը «բռնավորների դուռը գնա», ստիպված կլինի տուգանք վճարել, ինչպես որ սահմանված է*[46]*:*

Ինչ վերաբերում է Երուսաղեմի պատրիարքությանը, ապա պետք է նշել, որ օսմանյան տիրապետության 400 տարվա ընթացքում Հայ Եկեղեցին շարունակեց մնալ որպես տեղի երեք հիմնական եկեղեցիներից (Հույն ուղղափառի եւ Լատին կաթոլիկի հետ միասին) մեկը[47]*: Երուսաղեմի հա-*

---

[44] **Ա. Sanjian**, նշվ. աշխ., էջ 33. տես **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, մասն Բ., էջ 2156-2157: Կ. Պոլսի պատրիարքությանը ենթակա թեմերի մասին տես **Յ. Սիրունի**, նշվ. աշխ., հ. 1, էջ 292-306. **Մ. արք. Օրմանեան**, Հայոց Եկեղեցին, էջ 6. **Վ. Միքայելյան**, Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, Երեւան, 2003, էջ 97-102:

[45] **Վ. Միքայելյան**, նշվ. աշխ., էջ 332:

[46] «Կաթողիկոսական դիվան», թղթ. 258, վավերագիր 31: Վավերագրում Կիլիկիայի կաթողիկոսը խնդրում է նաեւ կարգադրել իրենց գրատան վարիչին, որ թույլ տա ձեռագրերից արտագրել `Ներսես Լամբրոնացու, Հակոբ Աստվածաբանի եւ Վարդան Բարձրաբերդցու գրվածքներից:

[47] **S. Kuruvilla**, The Palestinian Christian Church in Jerusalem: an interplay of history and nationalism in the Palestinian struggle for independence, https://www.academia.edu/4544018/ The Palestinian Christian Church in Jerusalem, p. 6.

յոց պատրիարքի իշխանությունը նաեւ քաղաքական բնույթ էր կրում եւ տարածվում էր միաբնակ համայնքների վրա[48]: Դա է վկայում նաեւ ՄՄ արխիվային բաժնում պահվող Հմր. 160 օսմաներեն վավերագիրը[49]: Այն Մահմուդ Բ.-ի (1808-1839 թթ.) կողմից Երուսաղեմի Գաբրիել Նիկոմիտացի պատրիարքին (1818-1840 թթ.) տրված երաշխավորագիրն է: Այդ փաստաթուղթը վերահաստատում է ղպտի, հաբեշ, ասորի համայնքների նկատմամբ Երուսաղեմի հայոց պատրիարքի իրավասությունները, որոնք դեռեւս 1517 թ. տվել էր սուլթան Սելիմը Ա.-ն (1512-1520 թթ.)՝ Երուսաղեմի նվաճումից հետո: Նշվում է նաեւ, որ Սելիմ Ա.-ից առաջ նմանօրինակ ֆերմաններ Երուսաղեմի հայերին տվել են Օմար, Ալի խալիֆաները[50], Սալահ ադ-Դինը, իսկ օսմանյան տիրակալներից՝ նաեւ սուլթան Սուլեյման եւ սուլթան Մեհմեդ խաները: 1246 թ. Զու լ-Կադա ամսի 26-ին (1831 թ. մայիսի 9) Մահմուդ Բ. Ղազիի ժամանակ վերահաստատվում են Սելիմի Ա.-ի՝ Հայոց պատրիարքությանը տված արտոնությունները:

Ընդհանրապես, հարկ է նշել, որ հայանպաստ ֆերմանների մեծ մասը վերագրվում են Մահմուդ Բ.-ին:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի 258-րդ թղթապանակի 61-րդ վավերագիրը Մահմուդ Բ.-ի կողմից Կ. Պոլսի պատրիարք Գրիգոր Խամսեցու (1801-1802, 1802-1813 թթ.) գրագիր Մանուկ դպիրի գրությունն է՝ հասցեագրված Դանիել կաթողիկոսին (Դանիել Ա. Սուրմառեցի՝ 1807-1808 թթ.): Գրագիրը, ներկայացնելով Մուստաֆա Բայրակտար փաշայի կողմից սուլթանի պալատ ներխուժելը, Մուստաֆա Դ.-ին գահընկեց անելն ու Մահմուդ Բ.-ին գահին նստեցնելը, նշում է, որ վերջինս հույներից վերցնում եւ հայերին է վերադարձնում Ս. Հակոբի վանքը[51]:

Մեկ այլ ֆերմանով, որը տրվել էր ի պատասխան Կ. Պոլսի Հովհաննես Թ. Կոլոտ Բաղիշեցի պատրիարքի (1715-1741 թթ.) խնդրանքի, Հիջրայի 1140 թ. /1727 թ. սուլթան Ահմադ Գ.-ն (1703-1730 թթ.) երկրի բոլոր զազիներին, նայիբներին, նահանգապետներին արգելում է Երուսաղեմ ուխտի գնացողներից որեւէ հարկ պահանջել[52]:

---

[48] **D. Tsimhoni**, The Armenians and the Syrians: ethno-religious communities in Jerusalem, Middle Eastern Studies, 1984, vol. 20, N 3, Jul., p. 352.

[49] «Կաթողիկոսական դիվան», թղթ. 3, վավ. 160, օսմ.:

[50] Տես **Վ. Մակարյան**, Ալի իբն Աբու Թալիբի՝ քրիստոնյաներին տրված երաշխավորագիրը, Լեւոն Խաչիկյան, 90. Նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան ինսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի, 2010:

[51] **Յ. Սիրունի**, Պոլիս եւ իր դերը, հ. 2, Պէյրութ, 1969, էջ 50-55, 62-63:

[52] «Կաթողիկոսական դիվան», թղթ. 3, վավ. 32 (օսմաներեն):

Հայոց պատրիարքների ունեցած հեղինակության մասին է վկայում նաեւ մանկահավաքի (Դեւշիրմե[53]) վերաբերյալ մի տեղեկություն: Ըստ հայկական աղբյուրների[54]՝ Բարձր Հայքի հայաշատ գավառներում անցկացվող մանկահավաքը Մաղաքիա Դերջանցի վարդապետը համարում էր անմարդկային եւ սարսափելի: Մաղաքիան արդեն ծերացել էր, սակայն անձամբ է գալիս Կ. Պոլիս՝ իր նախկին աշակերտ, պատրիարք Աստվածատուր Եաղուպյան եպիսկոպոսի մոտ (1537-1550 թթ.): Մաղաքիա վարդապետը, մեծ ջանքեր գործադրելով, կայսերական արտոնություն է ստանում Դերջանում, Բաբերդում եւ հայաբնակ որոշ վայրերում մանկահավաքը դադարեցնելու վերաբերյալ: Այդ ձեռնարկը հաջողությամբ է պսակվել 1545 թ., եւ դրա օրինակը քաջալերիչ է եղել մյուս գավառների համար: Այդպես՝ հատուկ դիմումներով եւ այլ միջոցներով արտոնություններ են ստացել, որի հետեւանքով մանկահավաքը հետզհետե դադարել է:

ԺԸ. դարի առաջին կեսից սկսյալ՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքների իրավական վիճակը փոխվում է. միլլեթների հոգեւոր եւ քաղաքացիական գործերի կառավարման հարցում կարեւոր դեր են սկսում խաղալ հայ մեծահարուստները (պաշտոնյաներ, լումայափոխներ), որոնց դարակեսից կոչում էին ամիրաներ[55]: Հայ ամիրաների դիրքերն առավել ամրապնդվեցին ԺԹ. դարում՝ կապված կայսրության ներքին քաղաքական փոփոխությունների հետ. վերջիններս պայմանավորված էին դարասկզբին արտաքին քաղաքականության ոլորտում օսմանյան իշխանությունների կրած անհաջողություններով:

1804 թ. սերբական, ապա՝ 1821 թ. հունական ապստամբությունների հետեւանքով Օսմանյան կայսրությունից անջատվեցին եվրոպական տարածքները: Հունական հեղափոխությունը բեկումնային դարձավ նաեւ միլլեթների շրջանում լուրջ փոփոխությունների համար: Հունական միլլեթը քաղաքական հարթակում մինչ այդ զբաղեցրած իր գերակա դիրքը

---

[53] **Մ. Զուլալյան**, Դեւշիրմեն (մանկահավաքը) Օսմանյան կայսրությունում ըստ թուրքական եւ հայկական աղբյուրների, ՊԲՀ, 1959, թ. 2-3, էջ 247-256. **Ա. Շաքարյան**, Բռնագաղթն ու մանկահավաքը որպես Օսմանյան կայսրությունում ժողովրդագրական վերադասավորման միջոցներ, Մերձավոր Արեւելք II, Երեւան, 2005, էջ 59-62, «Օսմանյան կայսրության բնակչության խուսափումը դեւշիրմեից», Մերձավոր Արեւելք III, Երեւան, 2006, էջ 29-33:

[54] **Ղ. Ինճիճեան**, նշվ. աշխ., էջ 63-64. **Մ. արք. Օրամանեան**, Ազգապատում, մասն Բ., էջ 2237-2238:

[55] **D. Stamatopoulos**, նշվ. աշխ., էջ 263. տես **E. Hartmann**: The "Loyal nation" and its deputies. The Armenians in the first Ottoman Parliament, in: Ch. Herzog, M. Sharif (eds.), The first Ottoman experiment in democracy, Würzburg, 2010, p. 187-222, էջ 201:

զիջեց հայերին, որոնց օսմանյան իշխանությունները համարում էին «հավատարիմ համաերկրացի» (sadik yurttaş), «հավատարիմ հպատակ» (tebea-i sadika) եւ «հավատարիմ միլլեթ» (millet-i sadika)[56]:

ԺԹ. դարի առաջին տասնամյակներում հայ լումայափոխները՝ սարրաֆները, համագործակցելով մուսուլման պաշտոնյաների հետ, ձեռք բերեցին մեծ ազդեցություն[57]: Հայ ամիրաները հոգում էին պատրիարքության, եկեղեցական եւ ազգային հաստատությունների ծախսերը, որը նրանց իրավունք էր տալիս իրենց կամքը թելադրել միլլեթին: Ամիրաները հետզհետե դարձան ավելի զորեղ, քան պաշտոնապես ճանաչված պատրիարքը, ում արդեն իրենք էին առաջադրում[58]: Հայ աղայական դասը դարձավ թե՛ Սսի կաթողիկոսների եւ թե՛ Երուսաղեմի պատրիարքների, թեմական առաջնորդների եւ վեքիլ վարդապետների հենարանը, որոնց առաջադրում ու նշանակում էին հայ ամիրաները՝ վայելելով նահանգային վարչության եւ այլ իշխանավորների հովանավորությունը[59]: Հ. Սիրունին նշում է, որ ամիրայական մի քանի տներ, հատուկ բերաթների շնորհիվ, ազատված էին որոշ տուրքերից[60]:

ԺԹ. դարասկզբին Մահմուդ Բ.-ն (1808-1839 թթ.) արագացրեց Սելիմ Գ.-ի (1789-1807 թթ.) սկսած «ավանդական բարեփոխումները», որոնք երկիրը տանում էին դեպի արեւմտականացում, միտված էին բարելավելու վարչական կառավարման համակարգը եւ կասեցնելու քրիստոնյա հպատակների ազգային-ազատագրական շարժումների ընդլայնումը[61]:

---

[56] **Z. Kazici**, Osmanlilarda Hoşgörü, Türkler, Cilt 10, Ankara, 2002 [s. 221-232], էջ 417, http://www.meliksah.edu.tr/msen/wp-content/uploads/2014/06/turkler-cilt-10.splitted-and-merged.pdf.

[57] **D. Stamatopoulos**, նշվ. աշխ., էջ 257:

[58] **A. Sanjian**, նշվ. աշխ., էջ 36: Աղայական դասը եկավ փոխարինելու Կ. Պոլսի, այսպես կոչված, «Ալթը ջեմաաթ»-ին (վեց համայնքներ): Այդ վեց համայնքների հայությանը, որը կազմում էր պոլսահայության կորիզը, բնակեցրել էր սուլթան Մեհմեդ Բ. Ֆաթիհը: Պոլսահայ համայնքը պետության առջեւ ներկայացնում էին այդ համայնքների երեւելիները: Վերջիններիս հաճությամբ էր նաեւ ընտրվում նոր պատրիարքը: «Ալթը ջեմաաթ»-ի կողքին ժամանակի ընթացքում հայտնվեց «Օխտը օդալար»-ը՝ Կ. Պոլսի հայկական յոթ բնակավայրը: Նրանց թիվը հետագայում ավելացավ, սակայն «Օխտը օդալար» եզրը մնաց գործածության մեջ: Այս երեւույթը տարածում է գտել նաեւ կայսրության հայաբնակ այլ նահանգներում. տես **Յ. Սիրունի**, Պոլիս եւ իր դերը, հ. 1, էջ 195-198:

[59] **Վ. Միքայելյան**, նշվ. աշխ., էջ 332. տես **Մ. արք. Օրմանեան**, Հայոց Եկեղեցին, էջ 94, 142-144:

[60] **Յ. Սիրունի**, Պոլիս եւ իր դերը, հ. 2, էջ 89-90:

[61] **U. Makdisi**, Ottoman Orientalism, The American Historical Review, 2002, vol. 107, N 3, June, էջ 768-796. տես **Ռ. Սաֆրաստյան**, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920), Երեւան, 2009, էջ 44-54:

Սակայն դա հակառակ արդյունք ունեցավ՝ հանգեցնելով միլլեթների՝ կրոնական խմբերից համայնքների վերածմանը եւ ազգային շարժումների ծավալմանը[62]:

Այդ բարեփոխումները, որոնք հայտնի են «թանզիմաթ» անունով, չչրջանցեցին նաեւ միլլեթի համակարգը. 1839 թ. նոյեմբերի 3-ին «Գլուլ-հանեի Հաթթը» չերիֆով հայտարարվում էր բոլոր հպատակների (անկախ կրոնական եւ ազգային պատկանելությունից) անձի, պատվի եւ գույքի անձեռնմխելիություն[63]: Ոչ մուսուլմանները ողջունեցին, իսկ կայսրության մուսուլմանները դժգոհությամբ ընդունեցին այն, քանի որ այդ հռչակագրի բազմաթիվ դրույթներ հակասում էին մուսուլմանական ավանդույթներին եւ շարիային: Իսկ 1856 թ. փետրվարի 18-ի «Հաթթը հումայունը» (թանզիմաթի երկրորդ շրջան՝ ԺԹ. դարի 50-ական թթ. կեսերից մինչեւ 70-ական թթ. սկիզբ) լրացուցիչ արտոնություններ էր նախատեսում միլլեթների համար եւ միտված էր կայսրության բոլոր հպատակների միջեւ համեմատական հավասարություն ապահովելուն (պետական ծառայության անցնելու, զինվորական կամ քաղաքացիական ցանկացած վարժարան ընդունվելու իրավունք եւ այլն)[64]: Այս հռչակագիրը եւս բացասական արձագանք գտավ մուսուլման հասարակության կողմից եւ կայսրության շատ վայրերում անգամ չհրապարակվեց:

Օգտվելով թանզիմաթի առաջին շրջանում տրված արտոնություններից՝ 1844 թ.Մատթեոս պատրիարքի (1844-1848 թթ.) արտոնագրով ստեղծվեց պոլսահայերի ներքին գործերը կարգավորող մարմին՝ Ազգային ժողով՝ կազմված 30 անդամներից՝ 16 ամիրա եւ 14 համքար[65]: Ազգային ժողովին էր վերապահվում պատրիարքարանի միջոցների ծախսերի հսկումը, դպրոցների բացման արտոնությունը, հայ համայնքի հարկահավաքությունը[66]: 1847 թ. Կ. Պոլսի հայ համայնքի ներկայացուցիչները թույլտվություն ստացան ձեւավորելու երկու խորհուրդ՝ Հոգեւոր՝ 14 եւ Քաղաքացիական՝ 20 անդամներից բաղկացած[67]:

---

[62] Տեմ **E. Hartmann**, նշվ. աշխ., էջ 21. **S. Barbieri**, նշվ. աշխ., էջ 7:

[63] **Գ. Թանանյան**, Ազգային սահմանադրություն հայոց, http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/Tananyan.pdf, էջ 7: Հռչակագրերի բովանդակության մասին մանրամասն տես **F. Öztürk**, նշվ. աշխ., էջ 82. **Ռ. Սաֆրաստյան**, նշվ. աշխ., էջ 47-48:

[64] **Գ. Թանանյան**, նշվ. աշխ., էջ 7-8:

[65] Անդ, էջ 9:

[66] Անդ:

[67] **U. Masayuki**, The First Draft of the Armenian Millet Constitution, Annals of Japan Association for Middle East Studies, 2007, vol. 23, N 1, էջ 214:

Բարեփոխումների երկրորդ շրջանում՝ 1856 թ., օսմանյան իշխանությունների թույլտվությամբ յուրաքանչյուր միլլեթ կազմեց եւ ներկայացրեց Ազգային սահմանադրության նախագիծ[68]*: 1857 եւ 1860 թթ. հայկական միլլեթի ներկայացրած նախագծերը հավանության չարժանացան օսմանյան կառավարության կողմից, եւ միայն 1863 թ. մարտի 17-ին ընդունվեց «Ազգային սահմանադրություն հայոց»-ը («Nizâmnâme-i Millet-i Ermeniyân»)*[69]*: Այն բաղկացած էր 5 գլխից եւ 99 հոդվածից, որոնք վերաբերում էին հայկական միլլեթի բոլոր ենթահամակարգերին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին, Հոգեւոր եւ Քաղաքացիական խորհուրդներին (իր հանձնաժողովներով՝ կրթական, ինստիտուցիոնալ, դատական, վանական, ֆինանսական, կտակային, հիվանդանոցային), թաղային հնաձնաժողովներին, Գլխավոր ասամբլեային, միլլեթի շրջանային վարչակազմին, ինչպես նաեւ այդ ենթահամակարգերում ընդգրկված պաշտոնյաների ընտրությանը, պարտականություններին, համայնքի հարկահավաքությանը*[70]*:*

*Իսկ ահա 1876 թ. Օսմանյան կայսրության սահմանադրության (***Kânûn-i Esâsî***) 7-րդ հոդվածով կայսրության բոլոր հպատակները կոչվում էին օսմանցի՝ առանց խտրականության եւ անկախ դավանանքից, իսկ օսմանցու կարգավիճակ էին ստանում կամ կորցնում ըստ օրենքով հստակ սահմանված պայմանների*[71]*:*

1876 թ. սահմանադրության ընդունմամբ՝ կայսրության ոչ մուսուլմանների առջեւ բացվեցին նաեւ օսմանյան պետական ապարատի դռները: Հայերը կառավարությունում զբաղեցրին պատգամավորական աթոռներ[72] *եւ ստանձնեցին պետական պաշտոններ (թեկուզ ցածր աստիճանի, օրինակ՝ շրջանային վարչահամակարգում եւ այլն)*[73]*:*

---

[68] Անդ:

[69] **Գ. Թանանյան**, նշվ. աշխ., էջ 10-25: 1862 թ. ընդունվեցին հույն ուղղափառ, 1865 թ.՝ հրեա միլլեթների սահմանադրությունները. տես **U. Masayuki**, նշվ. աշխ., էջ 214:

[70] **U. Masayuki**, նշվ. աշխ., էջ 223-224. տես **Մ. արք. Օրմանեան**, Հայոց Եկեղեցին, էջ 144: Հարկ է նշել, որ հայ պատգամավորներն ու պաշտոնյաներն իրենց քաղաքական գործունեությունն սկսում էին պատրիարքարանից՝ որպես բարերարներ կամ պատրիարքարանի աշխատակիցներ. **E. Hartmann**, նշվ. աշխ., էջ 204:

[71] Անդ, էջ 83. **U. Makdisi**, նշվ. աշխ., էջ 771:

[72] Կառավարության կազմում ոչ մուսուլմանների, հատկապես հայերի զբաղեցրած աթոռների քանակի, մուսուլման-ոչ մուսուլման հարաբերակցության մասին մանրամասն տես **E. Hartmann**, նշվ. աշխ.:

[73] Հայ պատգամավորների հանձնախումբը՝ Գրիգոր Զոհրապի գլխավորությամբ, 1877 թ. դեկտեմբերի 7-ի նիստի ընթացքում հայկական միլլեթի կառավարությանը ներկայացրեց նոր օրենք՝ ոչ մուսուլմաններին ռազմական ուժերում ներգրավելու վերաբերյալ: Նրանք համոզված էին, որ դա հավասար իրավունքներ պահանջելու լավագույն ճանապարհն է: Միլլեթի Քաղաքացիական խորհրդի անդամները քվեարկեցին հօգուտ հա-

Թուրք ազգայնամոլ հեղինակների պնդմամբ՝ Օսմանյան պետության անկումը պայմանավորված էր քրիստոնյաների եւ հրեաների՝ պետական քաղաքականության մեջ ներգրավմամբ[74]*: Նրանց կարծիքով՝ «...դրանով իշխանությունները նպատակ էին հետապնդում ցույց տալու, որ օսմանյան գործելակերպում խտրականության քաղաքականություն չկար», եւ «ոչ մուսուլմանները եւս, լինելով իսլամական պետության քաղաքացիներ, իրավունք ունեին զբաղեցնելու պաշտոններ՝ բացառությամբ պետության ղեկավարի, բանակի հրամանատարի, կառավարչի կամ դատավորի, քանի որ այդ պաշտոններն արտահայտում էին Իսլամի ինքնիշխանությունը»*[75]*:*

Թուրք որոշ հեղինակներ, մասնավորապես Ա. Աքգունդուզն այն համոզման է, որ «Օսմանյան պետությունը ոչ մուսուլմաններին նման իրավունքներ տվել էր մինչ բարեփոխումները» եւ «օսմանյան ղեկավարությունը դարաշրջանի ոչ մուսուլմանների վիճակը պետք է կարգավորեր այն ճանապարհներով, որոնք պաշտպանելու էին իր շահերը, այլ ոչ թե հետեւեր եվրոպական փորձին», հետեւաբար՝ «համակարգի բարեփոխումները չօգնեցին, ավելին՝ կայսրության հետագա փլուզման պատճառը դարձան»[76]*: Ինչ վերաբերում է ազգային շարժումներին, ապա, ըստ Օսմանյան կայսրության պատմության ուսումնասիրողների (հատկապես բալկանյան), միլլեթի համակարգն ի սկզբանե եղել է հենց այն կաղապարը, որից պետք է ձեւավորվեին ԺԹ. դարում պետականության պահանջ ներկայացնող ազգային խմբերը*[77]*:*

Միլլեթների կազմավորման նպատակները. Միլլեթի կազմավորման եւ գործունեության նպատակների վերաբերյալ տարաբնույթ կարծիքներ են հնչել: Արեւմտյան մի խումբ գիտնականների (Մ. Մեյերը, Ֆ. Հիթթին) համոզմամբ՝ միլլեթների համակարգի ստեղծումն այն դասական ճանապարհն էր, որով իսլամը ձգտում էր լուծել հպատակ փոքրամասնությունների խնդիրները՝ համայնքները մեկուսացնելով իրարից[78]*: Իսկ գիտնա-*

յերի զինվորական ծառայության, սակայն հետագայում Հոգեւոր խորհուրդն ընդդիմացավ այդ որոշմանը, եւ այն այլեւս ընթացք չունեցավ. տես **E. Hartmann**, նշվ. աշխ., էջ 220:

[74] **F. Öztürk**, նշվ. աշխ., էջ 75-76:

[75] Անդ, էջ 75.

[76] **A. Akgunduz**, Tarihi Acidan Azinliklara Taninan Haklar ve Biz II (From the Historical Perspective: Rights Provided to non-Muslims and We, no: 2). տես **F. Öztürk**, նշվ. աշխ., էջ 82:

[77] **D. Stamatopoulos**, նշվ. աշխ., էջ 255:

[78] **M. Мейер**, Новые явления в социально-политической жизни османской империи во второй половине XVII-XVIII вв., с. 155-185, “Османская империя, система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы”, Сборник статей, Москва, 1986, с. 160. **Ph. Hitti**, History of the Arabs, London, 2002, p. 716-717. **F. Öztürk**, նշվ. աշխ., էջ 73:

կանների (հիմնականում թուրք) մեկ այլ խումբ կարծում է, որ այն օսմանյան կայսրության կողմից ոչ մուսուլման հպատակների նկատմամբ հանդուրժողականության դրսեւորում էր: Նրանք իրենց կարծիքը հիմնավորում են կայսրության որոշակի թվով ոչ մուսուլմանների, ինչպիսիք էին հույն պանարիոտները եւ հայ ամիրաները, պետության մեջ քաղաքական բարձր դիրքեր զբաղեցնելու հանգամանքով: Ըստ թուրք գիտնականների՝ «կայսրության ոչ մուսուլման բնակչությունը անկախ էր», եւ «նրանք գտնվում էին համեմատաբար լավ վիճակում, քան Եվրոպայի մուսուլմանները», կամ՝ «ոչ մուսուլմանների սոցիալ-տնտեսական դիրքը շատ ավելի կայուն էր եւ նախանձելի, քան կայսրության մուսուլման գյուղացիների ու բանվորների»[79]*:*

Ե՛վ միլլեթների կազմավորումը, ե՛ւ Մահմուդ Բ.-ի «բարեփոխումների շրջանում» հայերի վիճակի բարելավումը առաջին հայացքից կարելի է համարել «հանդուրժողականության դրսեւորում»: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Ու. Մաքդիսին, «քրիստոնյաները եւ մյուս ոչ մուսուլմանները հանդուրժելի էին, բայց ոչ երբեք հավասար»[80]*: Հանդուրժողականության պատճառները բնավ այն չէին, ինչ ներկայացնում է թուրք հեղինակ Ֆ. Օզթուրքը, թե՝ «իրականում օսմանցի թուրքերն սկսեցին յուրացնել համամարդկային արժեքների չափորոշիչներն իրենց դասական շրջանում (ԺԴ.-ԺԹ. դդ.)», կամ՝ «օսմանյան դարաշրջանում անհատի իրավունքներն ու ազատությունը շատ կարեւոր էին, դրանց օրինական հիմնավորումները պայմանավորված էին Ղուրանով»*[81]*:*

Ինչ վերաբերում է «բարեփոխումներին», արդեն նշեցինք, որ դրանք պայմանավորված էին կայսրության ներքին եւ արտաքին քաղաքական գործոններով: Իսկ ահա միլլեթների կազմավորումը, հոգեւոր առաջնորդներին «ընդարձակ» իրավունքների շնորհումը, բացի նշված կարծիքներից, ունեին նաեւ հետեւյալ նպատակները.

1. Միլլեթներ կազմավորելով եւ դրանց կառավարումը հոգեւոր առաջնորդներին հանձնելով՝ կայսրության բարձրագույն իշխանությունը պահվում էր (համենայն դեպս տեսականորեն) մեկ մարդու՝ սուլթան-խա-

---

[79] Տե՛ս **M. Campos**, Ottoman brothers, Muslims, Christians, and Jews in early twentieth-century, էջ 9. **Ա. Հովհաննիսյան**, «Արտոնյալ վաճառականության» (Hayriye tüccarlari) նախաձեռնումից մինչեւ «տնտեսության թուրքացման» քաղաքականություն, Արեւելագիտության հարցեր, թ. 10, Երեւան, 2015, էջ 17-50:

[80] **U. Makdisi**, նշվ. աշխ., էջ 774:

[81] **F. Öztürk**, նշվ. աշխ., էջ 75:

լիֆայի ձեռքում[82]: Այսինքն՝ մի շարք լիազորություններ տալով հոգեւոր առաջնորդներին, այնուամենայնիվ, համայնքներին առնչվող ցանկացած հարց նրանց միջոցով փոխանցվում էր սուլթանին եւ վճռվում իշխանության ցանկությամբ[83]:

2. Սուլթանական բերաթներ ստանալու համար մեծ գումարներ էին մտնում արքունական գանձարան[84]:

3. Կանոնավորվում էր հարկահավաքությունը: Այժմ Բարձր Դռան առաջ միայն միլլեթ բաշին էր պատասխանատու իր համայնքի հարկերի հավաքման եւ փոխանցման համար:

4. Ըստ ժամանակակից պատմաբանների՝ միլլեթների կազմավորումն Օսմանյան կայսրության համար ուներ նաեւ ռազմավարական նշանակություն: Նոր տարածքների նվաճման դեպքում դրանց հսկողությունն իրականացնում էին ըստ միլլեթ համակարգի, իսկ տեղի կառավարիչները փոխարինվում էին կրոնական համայնքների առաջնորդներով[85]:

5. Միլլեթների կառավարումը հոգեւոր առաջնորդներին հանձնելով՝ օսմանյան իշխանությունները կայսրությունն ապահովագրում էին նաեւ հետագա ցնցումներից, որոնք կարող էին առաջանալ քաղաքացիական կառավարիչների ըմբոստության, դավաճանության կամ ռազմադաշտում զոհվելու դեպքում[86]:

Հայկական միլլեթի կազմավորումն ու Կ. Պոլսի Հայոց պատրիարքության ստեղծումը եւս կայսրության հեռատես քաղաքականության արդյունք էին եւ պայմանավորված էին հետեւյալ հանգամանքներով.

1. Սուլթան Մեհմեդ Բ.-ն նախաձեռնեց Հայոց պատրիարքության ստեղծումը՝ ի հակակշիռ Կ. Պոլսի հունական մեծաթիվ համայնքի[87]:

2. Կ. Պոլսի հայոց պատրիարքին կայսրության համայն հայության նկատմամբ ընդարձակ իրավասություններ շնորհելով՝ ինքնաբերաբար թուլացնում էին Իրանի տիրապետության տակ գտնվող Մայր Աթոռ Ս.

---

[82] **Ph. Hitti**, նշվ. աշխ., էջ 716-717:

[83] **Ա. Սաֆրաստյան,** Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի եւ Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա., Երեւան, 1961, էջ 301- 302:

[84] Պետք է նշել, որ սուլթանական ֆերմանը հանգանակություն կատարելու լայն իրավունքներ էր ընձեռում պատրիարքին. տես **Մ. Զուլալյան**, Արեւմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երեւան, 1980, էջ 222:

[85] **B. Jarevich**, History of the Balkans, Cambridge, 1990, էջ 48-62:

[86] Անդ:

[87] Տես **Յ. Սիրունի**, Պոլիս եւ իր դերը, հ. 1, էջ 220-222: Ֆաթիհի «բարյացկամությունը» հայերի նկատմամբ բացատրելու համար անգամ շրջանառվել է նրա մոր հայուհի լինելու վարկածը. անդ, էջ 230-233:

Էջմիածնի եւ նրա թեմերի միջեւ կապը: Դրանով օսմանյան իշխանությունները նաեւ կանխում էին կայսրության ներքին գործերին Սեֆյանների միջամտությունը: Այս մասին Մաղաքիա արք. Օրմանյանը գրում է. «...պօլսեցիք շատոնց դադարած էին Էջմիածինէ սպասել իրենց գործերուն կարգադրութիւնը, վասն զի ոչ միայն հեռաւոր էին, այլ տարբեր պետութեան ներքոյ գտնուելով՝ չէին կրնար Օսմանեան կառավարութեան գործերուն միջամտել»[88]:

3. Կայսրության հայերին Ս. Էջմիածնից «կտրելու» քաղաքական նկատառումը միտված էր նաեւ խափանելու կայսրության տարածքում համազգային եւ համաքրիստոնեական միաբանության ջանքերը: Այդ նպատակով օսմանյան իշխանությունները վիճահարույց իրադրություններ էին ստեղծում Կ. Պոլսի, Աղթամարի պատրիարքությունների, Կիլիկիո կաթողիկոսության եւ Մայր Աթոռի միջեւ ու այդ հակասությունները հարթելու համար մեծ չափի կաշառքներ շորթում[89]:

4. Հաշվի էին առնվում Կ. Պոլսի հայոց պատրիարքների, ինչպես նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոսների՝ քաղաքական կողմնորոշման հարցում իրենց համայնքների համար ունեցած դերն ու կշիռը: «Սիրաշահելու» նպատակով՝ սուլթանները նրանց հատկացնում էին հողային մեծ տիրույթներ: Վակֆի իրավունքով հայոց պատրիարքների գերատեսչությունը տարածվում էր 200-ից ավելի վանքերի վրա[90]:

Ըստ պատմաբանների՝ միլլեթների գործունեության ավարտ կարելի է համարել այն շրջանը, երբ սուլթան Աբդուլ Համիդ Բ.-ն (1876-1909 թթ.) առաջ քաշեց պանիսլամիզի գաղափարախոսությունը[91]:

Այսպիսով՝ Օսմանյան կայսրության վարչակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օսմանյան իշխանությունները նախորդ տերություններից օրինակել կամ մշակել էին բազմաբնույթ համակարգեր եւ սոցիալական նորմեր՝ հնարավորին չափ դյուրացնելու համար տարաէթնիկ եւ բազմադավան հպատակների կառավարումը: Ըստ այդմ՝ հասարակությունը բաժանված էր դավանական եւ սոցիալական տարբեր խմբերի, որոնցից յուրաքանչյուրի համար սահմանված էին առանձին կարգեր՝ սկսյալ մարդկանց արտաքին տեսքից (հագուստ, բեղ-մորուք եւ այլն) մինչեւ տների արտաքին հարդարումը: Այս ամենը հաշվի առնելով՝ ամեն-

---

[88] **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, մասն Բ., էջ 2751. **Մ. Զուլալյան**, Արեւմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երեւան, 1980, էջ 223. **Սիմեոն Երեւանցի**, նշվ. աշխ., էջ 80-81:

[89] **Ա. Խաչատրյան**, Նվիրակությունը Հայոց եկեղեցում, Ս. Էջմիածին, 2004, էջ 76:

[90] **Մ. Զուլալյան**, Արեւմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., էջ 222:

[91] **D. Stamatopoulos**, նշվ. աշխ., էջ 266:

եւին էլ չի բացառվում միլլեթ համակարգի գործունեությունը նշյալ ժամանակաշրջանում:

Ի վերջո, որքան էլ կասկածի տակ առնվեն օսմանյան ղեկավար մարմինների կողմից ԺԵ.-ԺԹ. դարերում կայսրության ոչ մուսուլման բնակչությանը տրված՝ վերը քննարկված արտոնությունները կամ միլլեթի կազմավորումն ու գործունեությունն առհասարակ, այնուամենայնիվ, դրանց մասին փաստում են ոչ միայն օսմանյան/թուրքական պաշտոնական աղբյուրները եւ հետագա ուսումնասիրությունները, այլ նաեւ Հայոց կաթողիկոսների ու Կ. Պոլսի պատրիարքների դիվաններում պահպանված վավերագրերը: Սույն հոդվածի շրջանակում ուսումնասիրված արխիվային փաստաթղթերը, որոնք պահվում են Մաշտոցյան Մատենադարանի «Կաթողիկոսական դիվանում», թեեւ կրկնօրինակներ են կամ բնօրինակի (օսմաներեն, արաբերեն) հայերեն թարգմանություններ, այնուամենայնիվ, դրանից նրանց պատմական նշանակությունը ամենեւին էլ չի նվազում:

РЕЗЮМЕ

Слово “миллет” на арабском языке означает нация, национальность, но в Османской империи оно имело иное значение, указывало на религиозную и национальную принадлежность, в частности, на не мусульманские общины.

В XV веке, Османская империя создала систему миллетов, разделив не мусульманское население империи на три религиозно-этнические общины: греческую православную, армянскую апостольскую и еврейскую. Образование и деятельность миллетов, конечно, было связано с рядом внутренних и внешних политических факторов империи.

Миллеты пользовались легальной автономией в общественной жизни. Во главе каждой религиозной общины стоял миллет-баши, то есть патриарх или раввин. Во главе армянского миллета стоял армянский патриарх Константинополя, чьи полномочия распространялись на все монотеистические общины империи.

Османские султаны, оставляя за собой право на окончательное решение, армянским патриархам давали большие полномочия в управлении армянскими религиозными и светскими общинами империи. Об этом свидетельствуют архивные документы на арабском, османском и армянском языках (султанские бераты, ферманы, корреспонденция) хранящиеся в архиве католикосов, в Матенадаране.

SUMMARY

"Millet" is an Arabic word, which means "nation", "nationality", but in the Ottoman Empire it had a different meaning, pointing to religious and national origin, and more specifically, to non-Muslim communities.

In the 15th century, the Ottoman Empire created Millet system, and non-Muslim population was divided into three ethnic-religious communities: Greek Orthodox, Armenian Apostolic and Jewish. Formation and activity of the Millets, of course, was due to a number of internal and external political factors of Empire.

The Millets enjoyed legal autonomy in community life. As the head of each religious community was Millet bashi (head of community), that is the patriarch or the rabbi. The head of the Armenian Millet was Armenian Patriarch of Constantinople, whose powers were extended to the entire monotheist communities of the Empire.

Ottoman sultans, retaining the right of a final decision, had granted certain priorities to Armenian patriarchs over the gouvernance of the Armenian religious and secular communities of the Empire. The evidence of this are the Arabic, Ottoman Turkish and Armenian documents (sultans' berats, fermans and correspondence) preserved in the archive of Catholicoses of St. Etchmiadzin, in Matenadaran Collection.